Հաշվետվություն

2017 թվականի նոյեմբերի 7-ից 11-ը Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության «Զանգվածային անտառային հրդեհների, ջրհեղեղների և սեյսմիկ ռիսկերի աշխատանքային խմբերի հանդիպման» մասնակցության

1.Անունը, ազգանունը.

Արթուր Մուրադյան

2. Զբաղեցրած պաշտոնը.

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության բնակչության պաշտպանության և աղետների հետևանքների վերացման կազմակերպման վարչության պետ

3. Գործուղման վայրը և ժամկետները.

Ռուսաստանի Դաշնություն, ք. Սոչի, 2017թ. նոյեմբերի 7-ից 11-ը:

4. Հրավիրող կողմը.

Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպություն:

5. Գործուղման նպատակը.

Մասնակցություն Զանգվածային անտառային հրդեհների, ջրհեղեղների և սեյսմիկ ռիսկերի աշխատանքային խմբերի հանդիպմանը:

6. Քննարկված թեմաները.

Հանդիպումների ընթացքում քննարկվել են՝

1. սելավների և ջրհեղեղների դեմ պայքարի մեխանիզմները և այդ բնագավառում ներկայացած երկրների քաղաքականությունը,
2. խոշորամասշտաբ անտառային հրդեհների դեմ պայքարի մեխանիզմները և այդ բնագավառում ներկայացած երկրների քաղաքականությունը,
3. սեյսմիկ ռիսկի նվազեցման մեխանիզմները և այդ բնագավառում ներկայացած երկրների քաղաքականությունը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Այցի ընթացքում առանձին երկկողմ հանդիպումներ չեմ ունեցել:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Ռուսաստանի Դաշնության կողմից առաջարկվեց Սևծովյան տնտեսական համագործակցության (ՍԾՏՀ) երկրների ճգնաժամային կառավարման կենտրոններում ներդնել իրենց կողմից մշակված վիդեոկապի VIP net ծրագրային փաթեթ, ինչը կնպաստի տեղեկատվության փոխանակման արդյունավետության բարձրացմանը: ՍԾՏՀ քարտուղարությունը ստանձնեց ծրագրային փաթեթի ներդրման ֆինանսավորումը և միևնույն ժամանակ հայտնեց, որ անդամ երկրները պետք է ներկայացնեն ՍԾՏՀ հետ աշխատող կոնտակտային անձեր (կապի սպաներ):

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Քննարկումների արդյունքում ներկայացվեցին առաջարկություններ տարածաշրջանային՝ անդրսահմանային հնարավոր արտակարգ իրավիճակների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման մասին, ինչը կբարձրացնի աղետներին պատրաստվածության մակարդակը:

10. Գործուղվողը.

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության բնակչության պաշտպանության և աղետների հետևանքների վերացման կազմակերպման վարչության պետ, փ/ծ գնդապետ Արթուր Մուրադյան:

11. Ստորագրությունը, ամսաթիվը.

27.11.2017թ.: